ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի համայնք
ՀՀ Կոտայքի մարզ, գ.Պտղնի, 1-ին փող. 6
(0222) 69070, ptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 ՀՈՒՆԻՍԻ 2017թվականի N 21

ՍՈՒՍԱՆՆԱ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել քաղաքացի Սուսաննա Շալիկի Մնացականյանի դիմումը, որով ցանկություն է հայտնել օրինականացնել սեփականության իրավունքով իրեն պատկանող Կոտայքի մարզ գյուղ Պտղնի Պտղնի-2 այգետարածք թիվ 19 թաղամաս թիվ 11 հասցեի բնակավայրերի նշանակության հողամասում 1991 թվականին ինքնակամ կառուցված բնակելի տունը: Համայնքի կադաստրային քարտեզի, որակավորված անձի կողմից գծված հողամասի և շինության հատակագծերի և տեղում կատարված ուսումնասիրությունից պարզվեց, որ Սուսաննա Շալիկի Մնացականյանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզ գյուղ Պտղնի Պտղնի-2 այգետարածք թիվ 19 թաղամաս թիվ 11 հասցեի բնակավայրերի նշանակության հողամասում 1991 թվականին ինքնակամ կառուցվել է 50.29 քմ մակերեսով բնակելի տուն:

Համաձայն Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 9; 10; 11 և 22.1 կետերի պահանջների, հիմք ընդունելով որակավորված անձի կողմից գծված հողամասի և շինության հատակագծերը և հաշվի առնելով այն հանգամանքը, որ Սուսաննա Շալիկի Մնացականյանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզ գյուղ Պտղնի Պտղնի-2 այգետարածք թիվ 19 թաղամաս թիվ 11 հասցեի բնակավայրերի նշանակության հողամասում ինքնակամ կառուցված շինության պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, շինությունը կառուցված չի ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չի քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք՝ ***որոշում եմ.***

1. Քաղաքացի Սուսաննա Շալիկի Մնացականյանին սեփականության իրավունքով պատկանող 50.29 քմ մակերեսով բնակելի տունը համարել օրինական: Հաշվի առնելով, որ ինքնակամ շինությունը կառուցվել է մինչև 2001 թվականի մայիսի 15-ը, ինքնակամ կառուցված շինության օրինականացման համար վճար չի գանձվում:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՌԱՔԵԼ ՎԻՐԱԲՅԱՆ**

2017 թ. հունիսի 12
գ.Պտղնի